

2005-2007թթ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2004

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
Բաժին 1. Գազափոխադրման համակարգ	5
1.1. Համակարգի նկարագրություն	5
1.2. Ներդրումային ծրագրում նախատեսվող միջոցառումներ	5
1.3. Նախատեսվող ներդրումներ	5
1.3.1. Մայրուղային գազատարների շինարարություն, վերատեղադրում և վթարային հատվածների փոխարինում	6
1.3.2. Գազաբաշխիչ կայանների շինարարություն և վերազինում	8
1.3.3. Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում	9
1.3.4. Էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրում և ամբողջական վերազինում	10
1.3.5. Էներգամատակարարման համակարգի վերականգնում	11
1.3.6. Գազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	12
1.3.7. ԳՄԴ-ի գազահորերի հետազոտում և ընդլայնում	14
1.3.8. ԳՄԴ-ի էլեկտրասնուցման համակարգի վերազինում	15
1.4. Գազափոխադրման համակարգի կորուստների նվազեցման միջոցառումներ	17
Բաժին 2. Գազաբաշխման համակարգ	20
2.1. Համակարգի նկարագրություն	20
2.2. Ներդրումային ծրագրում նախատեսվող միջոցառումներ	21
2.3. Նախատեսվող ներդրումներ	21
2.3.1. Գազաբաշխման ցանցի շինարարություն	22
2.3.2. Նոր բաժանորդների գազահաշվիչների ձեռք բերում և տեղադրում	23
2.3.3. Գազաբաշխման համակարգում վերականգնում, փոխարինում, վերակառուցում	23
2.3.4. Գազաբաշխման համակարգի հաշվառման արդիականացում ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	25
2.3.5. Գազաբաշխման համակարգի էլեկտրաքիմիական պաշտպանություն	27
2.3.6. Էներգամատակարարման համակարգի արդիականացում	29
2.4. Գազաբաշխման ման համակարգի կորուստների նվազեցման միջոցառումներ	30
Բաժին 3. Գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում նախատեսված ներդրումային ծրագրեր	32
3.1. Շենքեր շինությունների կառուցման, ձեռք բերման և ընդլայնման միջոցառումներ	33
3.2. Ավտոտրանսպորտային միջոցների ձեռք բերման միջոցառումներ	34
3.3. Աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, վթարային ծառայության, արտակարգ իրավիճակների, հրդեհային անվտանգության, աշխատողների ուսուցման և որակավորման բարձրացման միջոցառումներ	36

3.4. Կապի համակարգում բարելավման միջոցառումներ	38
Բաժին 4. 2005-2007 թթ. գումարային ներդրումներ	43

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն «Ներդրումային ծրագիրը» կազմված է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի, 1 կետի, բ), ը) ենթակետերի և «Հայրուսգազարդ» ՓԲԸ թիվ 0109 լիցենզիայի 5.13 կետի և թիվ 0111 լիցենզիայի 5.12 կետի պայմանների համաձայն:

Ներդրումային ծրագրի նպատակն է 2005-2007թթ. ընթացքում «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից՝

- գազափոխադրման համակարգում
- գազաբաշխման համակարգում
- գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի շահագործման և սպասարկման ոլորտներում

ներդրումների ներգրավման ճանապարհով սպառողների անխափան, հուսալի և անվտանգ գազամատակարարման ապահովումը:

«Հայրուսգազարդ» ՓԲԸ ներդրումային ծրագրը կազմված է «Տրանսգազ» ՍՊԸ-ից ու Գազամատակարարման և Գազիֆիկացման Մասնաճուղերից (ԳԳՄ) ստացված գազամատակարարման համակարգի աշխատունակության պահպանման, բնական գազի կորուստների նվազեցման, համակարգի հուսալիության բարձրացման և անվտանգ շահագործման լոկալ ծրագրերի հիման վրա, որոնցում ներառված են ներդրումներ պահանջող օբյեկտների և աշխատանքների անվանացանկը՝ իրենց ծավալագումարային գնահատմամբ, ըստ տարիների և սպասվող արդյունքների:

Բ Ա Ժ Ի Ն 1

Գազափոխադրման հանակարգ

Բաժին 1. Գազափոխադրման համակարգ

1.1. Համակարգի նկարագրություն

ՀՀ գազափոխադրման համակարգը բաղկացած է՝

- 1718,14 կմ մայրուղային գազատարներից;
- 58 գազաբաշխիչ կայաններից (ԳԲԿ);
- 15 չափիչ հանգույցներից;
- էլեկտրաքիմիական պաշտպանիչ կայաններից (ԷՊԿ);
- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստ կայանից (ԳՍՊԿ):

1.2. Ներդրումային ծրագրում նախատեսվող միջոցառումներ

1. Մայրուղային գազատարերի շինարարություն, վթարային հատվածների փոխարինում և վերատեղադրում:

2. Գազաբաշխիչ կայանների շինարարություն և վերազինում:

3. Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում:

4. Էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրում և ամբողջական վերազինում:

5. Էլեկտրասնուցման համակարգի վերականգնում:

6. Գազափոխադրման հաշվառման համակարգի արդիականացում, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում:

7. ԳՍՊԿ-ի գազահորերի հետազոտում և ընդլայնում:

8. ԳՍՊԿ-ի էլեկտրասնուցման համակարգի ամբողջական վերազինում:

9. Գազափոխադրման համակարգում կորուստների նվազեցման միջոցառումներ:

1.3. Նախատեսվող ներդրումներ

Սույն ենթաբաժնում ներկայացվում են գազափոխադրման համակարգում 2005-2007թթ. ընթացքում նախատեսվող ներդրումները:

Միջոցառումները մշակելիս հիմք են ընդունվել տեղերում կատարված հետազոտման, և ախտորոշման արդյունքներով կազմված թերությունների ակտերը ու կիրառվել են տեղայնացված մոտեցումներ: Անհրաժեշտ միջոցառումների ծավալագումարային ամփոփ տեսքը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Գազափոխադրման համակարգում նախատեսվող ներդրումներ

h/h	Հիմնական ուղղվածություն	Միջոցառումների անվանումը	տարի (մլն.դրամ)		
			2005	2006	2007
1	Մայրուղային գազատարներ	Գազատարերի շինարարություն, վերատեղադրում, փոխարինում	96,80	787,10	712,20
2		ԳԲԿ, ԳԶԿ շինարարություն և վերազինում	40,00	37,50	37,50
3		Գծային փականներ տեղադրում, վերազինում	21,70	50,00	50,00
4		ԷՊԿ տեղադրում, վերազինում	66,30	94,80	110,60
5		Էլ.համակարգի վերականգնում	27,1	4,20	
6		Հաշվառման համակարգի արդիականացում, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում	64,3	50,08	60,67
<i>Ընհանուր</i>			<i>316,13</i>	<i>1023,68</i>	<i>970,97</i>
7	ԳՍՊԿ	Հետազոտում	34,20	68,30	102,50
8		Ընդլայնում	16,60	356,70	356,70
9		Էլ.համակարգ վերազինում	9,08		
<i>Ընհանուր</i>			<i>59,88</i>	<i>425,00</i>	<i>459,20</i>
10		Կորուստների նվազեցում	43,50	357,20	213,20
Ընդամենը			419,58	1805,88	1643,37

1.3.1. Մայրուղային գազատարերի շինարարություն, վերատեղադրում և վթարային հատվածների փոխարինում

2005-2007 թթ. նախատեսվում է մայրուղային գազատարների ցանցի շինարարություն և ընդլայնում, որի ժամանակացույցը ըստ ծավալագումարային ցուցանիշների բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Մայրուղային գազատարների շինարարություն և ընդլայնում

h/h	Աշխատանքների անվանում	Գազատարի տրամագիծ	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)		
			2005	2006	2007

		(մմ)	կմ	գումար	կմ	գումար	կմ	գումար
1	Շինարարություն	Մ 720	0,35	30,3	1,5	203,8	1,5	129,5
2		Մ 529	1,1	66,5	2	120,8	9	582,7
3		Մ 325						
4		Մ 219			10	462,5		
5		Մ 108						
Ընդամենը			1,45	96,8	13,5	787,1	10,5	712,2

Ըկերության կողմից գազափոխադրման համակարգում 2005թ. նախատեսված միջոցառումները բերված են աղյուսակ 3-ում, որտեղ ներառված են մայրուղային գազատարերի վթարային հատվածների փոխարինման և վերատեղադրման միջոցառումներ:

Աղյուսակ 3. Մայրուղային գազատարերի շինարարություն, վերատեղադրում և վթարային հատվածների փոխարինում

h/h	Անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեք մլն. դրամ	Ընդհանուր մլն. դրամ
	1	2	3	4	5
1	Երևան-Արմավիր d=530մմ	կմ	0,6	60,4	36,2
2	Իլիչևսկ-Երևան d=720մմ	կմ	0,35	86,3	30,3
3	Կամո-Մարտունի d=530մմ	կմ	0,5	60,4	30,3
Ընդամենը			1,45		96,8

Ակնկալվող արդյունքները

1. Երևան-Արմավիր 530մմ-ոց գազատարի անվտանգ շահագործման աստիճանի բարձրացման, ԱԷԿ-ի անխափան և դարձափոխային գազամատակարարման ապահովման, ինչպես նաև գազատարի անհրաշեշտ տեխնոլոգիական ցուցանիշների վերականգնման նպատակով 2005 թ. նախատեսվում է իրականացնել գազատարի 0.6 կմ հատվածի վերատեղադրում: Տվյալ միջոցառումը կրում է շարունակական (ծրագրային) բնույթ:
2. Իլիչևսկ-Երևան 720մմ գազատարը բնական գազ է ապահովում արտադրական ձեռնարկություններին (այդ թվում Արարատի ցեմենտի գործարանին), հիմնական սնուցող գծի անջատման ժամանակ: Գազատարը աշխատանքային վիճակի բերելը կապահովի արդյունաբերական ձեռնարկությունների տեխնոլոգիական պրոցեսների անընդհատություն:

3. Կանոն-Մարտունի գազատարն անցնում է բարդ երկրաբանական տեղանքով (ճահիճներ, անցում գետի միջով և այլն): Ինչպես նաև վերոհիշյալ գազատարի վրա սույն թվականին կառուցվել է նոր ավտոճանապարհ առանց հաշվի առնելու տեխնոլոգիապես անհրաժեշտ պատյանի կառուցումը: Գազատարի վրա կատարվելիք միջոցառումները (գազատարի հատվածի վերատեղադրում և պատյանի կառուցում) թույլ կտա տեխնոլոգիապես ճիշտ շահագործել գազատարը և ապահովել շահագործման նորմերը:

1.3.2. Գազաբաշխիչ և գազաչափիչ կայանների շինարարություն և արդիականացում

Գազաբաշխիչ կայանները նախատեսված են բնական գազի ճնշումը գազափոխադրման համակարգի ճնշմանը հավասարեցնելու համար, կախված բնակավայրերի, արդյունաբերական կամ էներգետիկ օբյեկտների գազաֆիկացման նախագծերով նախատեսված ճնշումների՝ 12.0, 6.0 կամ 3.0 մթն.:

2005թ. համար ԳԲԿ շինարարության և նոր տեխնոլոգիական սարքավորումների տեղադրման, ինչպես նաև չափիչ հանգույցների (ԶՅ) արդիականացման նպատակով անհրաժեշտ աշխատանքների ծավալագումարային ցուցանիշները բերված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Գազաբաշխիչ և գազաչափիչ կայանների շինարարություն և արդիականացում

h/h	Աշխատանքների անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2005		2006		2007	
		h.	գումար	h.	գումար	h.	գումար
1	ԳԲԿ-ի շենքերի ընդլայնում նոր սարքավորումների տեղադրման նպատակով	4	8.3	5	14,6	5	14.6
2	Տեխնոլոգիական սարքավորումներ	4	8.3	5	10.4	5	10.4
3	Դիլիջան-Վանաձոր ԶՅ-ի արդիականացում	1	12.5				
4	ԳԲԿ-ի շինարարություն	1	10.8	1	12.5	1	12.5
Ընդամենը			40,0		37,5		37,5

Ակնկալվող արդյունքները

1. Նոր տեխնոլոգիական սարքավորումների ներդրումը կատարվելու է Էջմիածնի, Մասիսի, Ջրագդան-2 և Արթիկի ԳԲԿ-ների շենքերում, որը իր հերթին կպահանջի շենքերի ընդլայնում: Տվյալ միջոցառումների կատարումը կապահովի ԳԲԿ-ների աշխատանքը՝ նախագծային ցուցանիշներին համապատասխան:
2. Երևան քաղաքի անխափան գազամատակարարման ապահովման և ճշգրիտ հաշվառման նպատակով անհրաժեշտություն է առաջացել Դիլիջան – Վանաձոր

գազատարի վրա տեղադրված չափիչ հանգույցի փոխարինումը և արդիականացումը:

3. Լոռու նարգում, կապված ակտիվ գազաֆիկացման տեմպերի հետ, նախատեսվում է նոր ԳԲԿ-ի տեղադրում, որը կապահովի նոր բաժանորդների անխաբան և հուսալի գազամատակարարումը:

1.3.3 Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում

Մայրուղային գազատարների վրա տեղադրված են 200-ից ավել փականային հանգույցներ, որոնք ապահովում են գազատարերի այս կամ այն հատվածների անջատումները և գազամուղների կապը միմյանց հետ: Փականների մեծ մասը խցանային են:

Գազատարերի վրա նախատեսվող փականների քանակը, շինհավաքակցման աշխատանքների արժեքները ըստ տարիների բերված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում

h/h	Աշխատանքների անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2005		2006		2007	
		h.	գումար	h.	գումար	h.	գումար
1	Գծային փականների ամբողջական վերազինում, տեղադրում	2	21.7	2	50,0	2	50,0
ԸՆդամենը		2	21.7	2	50,0	2	50,0

Ակնկալվող արդյունքները

Փականների տեղադրումը պարտադրվում է գործող շինարարական նորմերով և թույլ է տալիս շինարարական աշխատանքների, վթարների կամ նորոգման ժամանակ գազատարի հատվածները մեկուսացնել (անջատել):

Ղազախ - Երևան գազամուղի վրա տեղադրված N9 գծային փականը (d=1020մմ) չի գործում, անկիպությունների պատճառով, վթարների ժամանակ վթարային ծառայությունը ստիպված է լինում դատարկել 12 կմ-ոց գազատարում առկա բնական գազից: Վերոհիշյալ միջոցառումների շնորհիվ հնարավոր կլինի վթարների ժամանակ գազատարի ավելի կարճ հատված դատարկել և ավելի քիչ ժամանակ ծախսել վթարի վերացման:

Նույնատիպ խնդիր է առաջացել նաև Ղազախ - Երևան - ԳՍՊԿ գազամուղի վրա տեղադրված N39 գծային փականի (d=530մմ) հետ, որը չի գործում:

1.3.4 Էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրում և ամբողջական վերազինում

Էլեկտրաքիմիական պաշտպանությունը նախատեսված է ստորգետնյա գազամուղների կոռոզիոն քայքայումներից պաշտպանման համար: Էլեկտրաքիմիական պաշտպանությունը ապահովում է կատոդային և դրենաժային պաշտպանության կայանների միջոցով: Գազափոխադրման համակարգում նախկինում տեղադրված շուրջ 140 էլեկտրապաշտպանիչ կայանները, որոնց շահագործումը դադարեցվել էր 1992թ. էներգետիկ ճգնաժամի պատճառով, ապակոմպլեկտավորվել և ապամոնտաժվել են, իսկ անոդային հողանցումները, որոնք ԷՊԿ-ների բաղադրիչ մասն են կազմում, լուծվել էին գրունտներում:

Այսպիսով մայրուղային գազատարները շահագործվում են առանց ԷՊԿ-ների, ինչը՝ հատկապես ագրեսիվ, թափառող հոսանքներով և ջրահագեցած գրունտներում ու գետանցումներում՝ գազատարերի մետաղի քայքայման պատճառ է հանդիսանում, որը կրճատում է գազատարերի շահագործման ժամկետները և բերում վթարների:

ԷՊԿ-երի տեղադրման և վերականգնման ծավալագումարային ցուցանիշները բերված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. ԷՊԿ-ների տեղադրում և ամբողջական վերազինում

հ/հ	Մասնաճյուղի անվանումը	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2005		2006		2007	
		հ.	գումար	հ.	գումար	հ.	գումար
1	ԷՊԿ-ների տեղադրում, այդ թվում	21	50.7	30	72.5	35	84.6
1.1	ՉԶԿ-ի տեղադրում	200	8.3				
2	ՆՅԱ, այդ թվում	21	15.6	30	22.3	35	26.0
2.1	ախտորոշում (63կմ)		13.2				
2.2	նախազիծ	21	2.4				
Ընդամենը		21	66.3	30	94.8	35	110.6

2005թ. նախատեսվում է տեղադրել 21 հատ էլեկտրապաշտպանիչ կայան, որից 16 հատ Լոռի ԳՇՄ, 4 հատ - Աբովյան ԳՇՄ և 1 հատ - Դիլիջան ԳՇՄ.

Ակնկալվող արդյունքները

Տեղադրված ԷՊԿ-ները կապահովվեն ստորգետնյա գազամուղների մեկուսացման և կոռոզիոն քայքայումից պաշտպանությունը և անխափան շահագործման երկարակետությունը:

1.3.5 էներգամատակարարման համակարգի վերականգնում

2005թ. «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ էներգետիկ համակարգի վերականգնման և վերազինման նախատեսվող միջոցառումները հիմնականում ուղղված են գազափոխադրման համակարգերի ինժեներական կառույցների հուսալի և անվտանգ էլեկտրա- մատակարարման ապահովմանը:

Գազափոխադրման համակարգում միջոցառումներն ուղղված են գազաբաշխիչ կայանների էլեկտրասնուցման վերականգնմանն ու վերազինմանը, որը բխորմ է մայրուղային գազատարերի բաշխման կայանների տեխնիկական շահագործման հրահանգից (HEДРА - 1990):

2005թ. գազափոխադրման համակարգում անհրաժեշտ միջոցառումների անվանացանկը բերված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Էներգամատակարարման համակարգի վերականգնում

h/h	Անվանումը	Չափման միավոր	Քա- նակ	Ընդհանուր մլն. դրամ	Ծանոթություն
	1	2	3	4	5
1	ԳԲԿ-ների էլ. համակարգի վերականգնում	հատ	16	26.66	Նշված ԳԲԿ-ներում ընդհանրապես բացակայում է էլեկտրասնուցումը
2	ԳԲԿ-ների շանթարգելների վերականգնում	հատ	8	0,42	
	Ընդամենը			27.1	

2006թ. նախատեսվում է «Տրանսգազ» ՍՊԸ և Աբովյանի ԳՇՄ վարչական շենքերի անկախ էլեկտրասնուցման նպատակով 250կՎԱ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանի շինարարություն՝ 4.2 մլն. դրամ գնահատված արժեքով, ինչը կապահովի ռեզերվային էլեկտրասնուցում հիմնական գծի հնարավոր հոսանքազրկման ժամանակահատվածում:

Ակնկալվող արդյունքները

Նշված միջոցառումների իրականացման շնորհիվ հնարավորություն կստեղծվի գազափոխադրման համակարգում էլեկտրամատակարարման համակարգը համապատասխանեցնել գործող շահագործման կանոններին, բարձրացնել անվտանգության աստիճանը, արդիականացնել ֆիզիկապես և բարոյապես մաշված էլեկտրասարքավորումները:

1.3.6. Գազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում

Ելնելով գազափոխադրման համակարգում հաշվառման համալիրի բարելավման և ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման անհրաժեշտությունից 2005-2007 թթ. համար նախատեսվում են հետևյալ միջոցառումները (աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Գազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում

հ/հ	Անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2005		2006		2007	
		հ.	գումար	հ.	գումար	հ.	գումար
1	Ճշտիչների շահագործման համար դյուրակիր համակարգչի (P-IV)	1	1,33	4	5,33	5	6,67
2	Շարժական էԲՊ լաբորատորիա	1	17,00	1	17,00	1	17,00
3	Արատացույցների գնում, որից						
3.1	Պարզեցված աշխատանքային ռեժիմով	1	0,42	4	1,67	1	0,42
3.2	Համակարգչային ավտոմատացված աղտորոշման հնարավորությամբ	1	5,42			1	5,50
4	Մեկուսապատման խափանման փնտրիչ	1	1,08	2	2,17	2	2,17
5	Հարակսաչափիչ	1	0,08	4	0,33	4	0,33
6	Հաստաչափերի գնում	2	0,75	5	2,0	6	2,09
7	Լազերային (թվային) երկարաչափ	1	0,17	4	0,67	2	0,33
8	Ստուգաճշտիչ	1	4,42	1	4,42	2	8,83
9	Միկրոպրոցեսորային ծախսաչափային համակարգերի տեղակայում	25	31,25	10	12,50	12	15,00
10	Պննմային մեխանիզմներ ԳԲԿ-երի համար	30	0,67	30	0,67	30	0,67
11	Ճշտիչների տեղակայում	5	1,67	10	3,33	5	1,67
Ընդամենը			64.3		50.08		60.67

Ակնկալվող արդյունքները

Գազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում, աշխատանքների էֆեկտիվության բարձրացում, շահագործման ծախսերի նվազեցում:

1.3.7. ԳՄԴ-ի գազահորերի հետազոտում և ընդլայնում

Հայաստանի Հանրապետության բնական գազի մատակարարման անընդհատության ապահովման մեջ կարևորագույն և առանձնահատուկ դեր է կատարում Աբովյանի ԳՄԴ-ն, որը հանրապետություն գազի ներմուծման դադարեցման ժամանակահատվածներում հադիսանում է բնական գազի միակ աղբյուր:

ԳՄԴ-ն ապահովում է՝

- Երևանի արդյունաբերական շրջանների գազասպառման սեզոնային և պիկային անհավասարությունների կարգավորումը;
- Հանրապետության կարևորագույն սպառողների գազամատակարարումը:

Վրաստանի տարածքով անցնող միակ մայրուղային գազամուղի տեխնիկական անբավարար վիճակը իր մեջ պարունակում է գազամուղի վրա և գազափոխադրման համակարգի այլ օբյեկտներում լուրջ վթարների հնարավորություն, ինչը կարող է խափանել գազի մատակարարումը Հանրապետություն:

Հաշվի առնելով Հայաստանի կախվածությունը ներմուծվող էներգառեսուրսներից, Աբովյանի ԳՄԴ-ն, հանդիսանում է Հայաստանի էներգետիկ անվտանգության և անկախության իրական երաշխիք: Անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանի էներգետիկ ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկն է Աբովյանի ԳՄԴ-ի նորմալ աշխատանքային վիճակի պահմանումը և միաժամանակ ստորգետնյա պահեստարանում բավականաչափ բնական գազի պահեստավորման համար անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական պայմանների ապահովումը: Աբովյանի ԳՄԴ-ն զբաղեցնում է կարևորագույն տեղ Հանրապետության գազի մատակարարման ուղիների զանազանեցման ռազմավարության ուրվագծում: Ապագայում Աբովյանի ԳՄԴ-ն կարող է նպաստել բնական գազի տարանցման կազմակերպմանը դեպի երրորդ երկրներ:

2005-2007 թթ. նախատեսվում է կատարել համալիր հետազոտական աշխատանքներ՝ գազահորերի նախկին ծավալների վերականգնման որի համար նախևառաջ անհրաժեշտ է իրականացնել աղաջրային համալիրի կառուցումը, որը իր մեջ ընդգրկում է հետևյալ աշխատանքները՝

- 230 հազ. մ3 ծավալով վերգետնյա աղաջրերի պահեստարանի կառուցում;
- ջրի ներմղման պոմպակայանի սարքավորումների վերազինում;
- աղաջրատար և ջրատար խողովակաշարերի կառուցում դեպի հորեր:

2006-2007թթ. նախատեսվում է շարունակել վթարային գազահորերի համալիր հետազոտման և վերականգնման աշխատանքները:

Աղյուսակ 9. ԳՄԴ գազահորերի հետազոտում և ընդլայնում

հ\հ	Աշխատանքների անվանում	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)		
		2005	2006	2007
		գումար	գումար	գումար
1	Վթարային գազահորերի համալիր հետազոտում և վերականգնում	34.2	68.3	102.5
2	Ընդլայնում, որից			
2.1	Աղաջրերի պահեստարանի ՆՀԱ	16.6	-	-
2.2	Աղաջրերի օգտահանման համալիր կառուցում	-	356.7	356.7
Ընդամենը		50.8	425.0	459.2

Ակնկալվող արդյունքները

2005 թ. նշված միջոցառման իրականացման արդյունքում հնարավորություն կլինի առավել ճշգրիտ գնահատել 2006-2007 թթ. անհրաժեշտ աշխատանքների ծավալը աղաջրերի պահեստարանի կառուցումն և ստորգետնյա պահեստարանի ծավալների ավելացման հնարավոր/օպտիմալ ուղիների որոշման:

1.3.8. ԳՄՊԿ-ի էլեկտրասնուցման համակարգի վերազինում

2005թ. Աբովյանի ԳՄՊԿ էներգետիկ համակարգի վերականգնման և վերազինման նախատեսվող միջոցառումները հիմնականում ուղղված են էլեկտրասարքավորումների վերականգնմանը, արդիականացմանը, ջեռուցող կաթսաների և գործող ջերմային ցանցի արդյունավետության բարձրացմանը:

Աբովյանի ԳՄՊԿ-ում 2005թ.-ի համար նախատեսվող միջոցառումները բխում է շահագործման ընթացքում հայտնաբերված էլեկտրական սարքավորումների թերությունների վերացման անհաժեշտությունից (աղյուսակ 10):

Աղյուսակ 10. ԳՄՊԿ-ի էլեկտրասնուցման համակարգի վերազինում

h/h	Անվանումը	Չափման միավոր	Քանակ	Ընդհանուր մլն. դրամ	Ծանոթություն
1	2	3	4	5	6
1	ԳՄՊԿ-ի տարածքի լուսավորման վերականգնում			2,5	

2	10-110 կՎտ հզորությամբ էլ. շարժիչների վերազինում	հատ	4	0,83	Նախագծային հզորության վերականգնում
3	□□□□□-37 էլ. շարժիչի վերականգնում	հատ	2	0,67	
4	"□□□□□□□□□□" -5□" կաթսաների վերազինում	հատ	4	1,67	
5	Տրանսֆորմատորային ենթակայանների սարքավորումների և ուժային կառավարման վահանակի վերազինում	հատ	5	1,67	Համապատասխանեցում էլեկտրամատակարարման գործող նորմերին
6	Վարչական շենքից մինջև ՀՏԿ1 □□□□ մալուխի փոխարինում	մ	120	1,25	
7	□□□ գազի 7-8 մալուխի փոխարինում	մ	500	0,5	
Ընդամենը				9,08	

Ակնկալվող արդյունքները

Նշված միջոցառումների իրականացման շնորհիվ հնարավորություն կստեղծվի ԳՍՊԿ-ի էլեկտրամատակարարման համակարգը համապատասխանեցնել գործող շահագործման կանոններին, բարձրացնել անվտանգության աստիճանը, արդիականացնել ֆիզիկապես և բարոյապես մաշված էլեկտրասարքավորումները:

1.4. Գազափոխադրման համակարգի կորուստների նվազեցման միջոցառումներ

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Գազափոխադրման համակարգում տեղ գտած բնական գազի կորուստների նվազեցման նպատակով նախատեսված աշխատանքներն ուղղված են Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մայրուղային գազատարների նորմատիվային պարամետրերի վերականգնմանը, անկիպ գծային

փականների փոխարինմանը, Աբովյանի գազի ստորգետնյա պահեստ կայանի (ԳՍՊԿ) գազահորերի երկրաբանական համալիր ուսումնասիրությանը, նրանց հերմետիկությունը ապահովող անհրաժեշտ աշխատանքների կատարմանը, ինչպես նաև գազահորերի ելքային փականների փոխարինմանը:

Չնայած այն հանգամանքին, որ սույն ծրագրի նախորդ ենթաբաժիններում նկարագրված միջոցառումների իրականացումը նույնպես կհանգեցնի բնական գազի կորուստների նվազեցմանը, սույն ենթաբաժնում նկարագրվող միջոցառումները անմիջականորեն են ուղղված կորուստների նվազեցման ապահովմանը:

2005 թ. գազափոխադրման համակարգում բնական գազի կորուստների նվազեցման նպատակով նախատեսված աշխատանքները հետևյալն են (աղյուսակ 11)՝

Երկար տարիների շահագործումից հետո խողովակաշարերի մետաղների ֆիզիկական հոգնածության, մաշվածության՝ կախված դինամիկ բեռնվածությունների տատանումներից, կոռոզիոն ակտիվ գրունտների ազդեցության, ճահճուտ տեղամասերի առկայության պատճառով գազատարների վթարային հատվածների վերատեղադրում և ամբողջականության վերականգնում:

Աղյուսակ 11. Գազափոխադրման համակարգի կորուստների նվազեցման միջոցառումներ

h/h	Միջոցառումների անվանումը	Չ. մ.	Աշխատանքի ծավալը և պահանջվող գումարները մլն. դրամ						
			2005		2006		2007		
			ծավ	գումար	ծավ	գումար	ծավ	գումար	
	1	2	3	4	7	8	9	10	
1	Մայրուղային գազատարներ					325,9			182,4

1.1	Սայրուղային գազատարերի վթարային հատվածների վերանորոգում անկիպության վերացման նպատակով, այդ թվում	կմ	0,65	43.5	5	302,1	3	181,3
	Երևան-Արմավիր D-530	կմ	0,5	30.8	5	302,1	3	181,3
	Իլլիչևսկ-Երևան D-720	կմ	0,15	12.7	0		0	
	Կամո-Մարտունի D-530	կմ			0		0	
	Վանաձոր-Գյումրի D-530	կմ						
	Գյումրի-Արմավիր D-720	կմ						
1.2	Փականային հանգույցների նոնային փականների վերականգնում, այդ թվում	հատ			5,00	1,5	5,00	1,2
	Dy-1020	հատ						
	Dy-720	հատ						
	Dy-530	հատ						
	Dy-300	հատ			3	1,2	2	0,8
	Dy-150	հատ			2	0,2	3	0,3
1.3	Գազափոխադրման համակարգում գազի հաշվառման առևտրային հանգույցների արդիակա-նացում փոխարինելով մեխանի-կական □□□ տիպի դիֆերենցիալ մանոմետրերը բարձր մշտության դասի էլեկտրոնային ծախսաչափիչ համալիրներով	հատ			12	22,4		
2.	ԳՍՊԿ					31,3		30,8
2.1	Շլեյֆային գազատարերի վերականգնում	կմ			0,3	5,0	0,2	3,3
2.2	Շահագործվող գազահորերի վերականգնում	հատ			1	25,0	1	25,0
2.3	Գազահորերի ելանցքային փականների վերականգնում	հատ			5	1,3	10	2,5
	Ընդամենը		0,65	43.5		357,2		213,2
	Կորուստների ակնկալվող նվազեցման չափը ըստ տարիների	մլն մ3	1.31		4.45		2.88	

Ակնկալվող արդյունքները

Վերոհիշյալ աշխատանքների իրականացումը 2005-2007 թթ. ընթացքում կնպաստի գազափոխադրման համակարգում առկա բնական գազի կորուստների քանակի 8.64 մլն. մ3-ի չափով նվազեցմանը:

Բ Ա Ժ Ի Ն 2

Գազաբաշխման համակարգ

Բաժին 2. Գազաբաշխման համակարգ

2.1. Համակարգի նկարագրություն

Մինչև 1991թվականը Հայաստանի բնակավայրերի գազաֆիկացման մակարդակը քաղաքներում հասնում էր 82,6%, իսկ գյուղական վայրերում՝ 83,3%: Ընդհանուր առմամբ շահագործվում էր 9464,9 կմ գազաբաշխիչ ցանցեր, 1756 գազակարգավորման կետեր, 778 էլեկտրաքիմիական պաշտպանիչ կայաններ (ԷՊԿ), իրականացվել է 42 քաղաքային և 356 գյուղական վայրերի 484533 սպառողների, 2 հազար արդյունաբերական ձեռնարկությունների

և կոմունալ-կենցաղային օբյեկտների, այդ թվում՝ 500 ջեռուցման կաթսայատների գազամատակարարումը:

Սակայն, 1991-1995 թվականներին ամբողջովին դադարեցվել էր գազի մատակարարումը բնակչությանը, մասամբ՝ կոմունալ-կենցաղային օբյեկտներին և արդյունաբերական ձեռնարկություններին:

Բնական գազի մատակարարման երկարատև դադարեցումը, էլեկտրապաշտպանիչ կայանների հարկադրական անգործությունը, ընթացիկ և կապիտալ վերանորոգումների համար անհրաժեշտ գումարների սղությունը, զգալիորեն ազդեցին համակարգի տեխնիկական վիճակի վրա:

Գտնվելով ագրեսիվ միջավայրում և էլեկտրաքիմպաշտպանիչ կայանների չգործելու պայմաններում գազատարները ենթարկվել են քայքայման և հայտնվել են վթարային վիճակում:

1996 թվականից՝ սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց, սկսվեց գազաբաշխման համակարգի վերականգնումը: Բնական գազի մատակարարումն իրականացնելու համար կատարվել են նախկինում գործող գազատարների վերականգնման և վերատեղադրման աշխատանքներ:

Գազաբաշխման համակարգի անվտանգ շահագործումն ու անխափան գազամատակարարումն իրականացնելու համար կատարվել են գործող գազատարների վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներ:

Նոր բաժանորդներին և սպառողներին բնական գազ մատակարարելու, գազամատակարարումն օպտիմալ սխեմայով իրականացնելու նպատակով, կատարվել են գործող գազատարների ընդլայնման և վերակառուցման աշխատանքներ:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կողմից սպառողներին անխափան, անվտանգ գազամատակարարման ապահովման և բնական գազի կորուստների նվազեցման ուղղությամբ աշխատանքները տարվել են մշտապես, սակայն որպես ներդրումային ծրագրեր կազմվել և իրականացվել են սկսած 2001 թվականից: Վերջին երեք տարիների ընթացքում Ընկերության տնօրինության տակ գտնվող գազային համալիրի (գազատարներ, ինժեներական կառույցներ, սարքավորումներ, փակող արմատուրաներ և այլն) նախագծային-տեխնիկական պարամետրերի պահպանման և բնական գազի կորուստների նվազեցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները բերել են որոշակի դրական արդյունքների և սույն ծրագիրը հանդիսանում է որպես նախորդ տարիների աշխատանքների շարունակություն:

2.2. Ներդրումային ծրագրում նախատեսվող միջոցառումներ

1. Բնական գազի աճող պահանջարկի բավարարում, գազաբաշխման ցանցի շինարարություն:
2. Նոր բաժանորդների գազահաշվիչների ձեռք բերում և տեղադրում:
3. Նախկինում գործող գազահամակարգի վերականգնում, փոխարինում և վերակառուցում:
4. Գազաբաշխման համակարգի հաշվառման համալիրի բարելավում, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրում:
5. Էլեկտրապաշտպանիչ(ԷՊԿ) կայանների վերականգնում:
6. Էներգամատակարարման համակարգի արդիականացում:
7. Գազաբաշխման համակարգում կորուստների նվազեցման միջոցառումներ:

2.3. Նախատեսվող ներդրումներ

Սույն ենթաբաժնում ներկայացվում են 2005-2007թթ. ընթացքում գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումները:

Միջոցառումները մշակելիս կիրառվել է տեղայնացված մոտեցում, հիմք են ընդունվել տեղերում կատարված հետազոտման և ախտորոշման արդյունքները ու դրանց հիման վրա կազմված թերությունների ակտերը: Ամփոփումից հետո միջոցառումները ներկայացված են ծավալագումարային տեսքով (աղյուսակ 12):

Աղյուսակ 12. Գազաբաշխման համակարգում նախատեսվող ներդրումներ

h/h	Հիմնական ուղղվածություն	Միջոցառումների անվանումը	տարի (մլն.դրամ)		
			2005	2006	2007
1	Բաշխման գազատարներ	Շինարարություն	1837,7	1895,1	1503,9
2		Գազահաշվիչներ	3000	2333,3	1666,7
3		Վերականգնում	372,5	807,5	922,5
4		Հաշվառման համակարգի բարելավում	296,7	168,8	195,8
5		ԷՊԿ տեղադրում	84,5	99,5	107,8
6		Էլ.համակարգի արդիականացում	18,9	1,25	1,25
7		Կորուստների նվազեցում	131,42	190,21	141,28
Ընդամենը			5741,7	5495,7	4539,23

2.3.1 Գազաբաշխման ցանցի շինարարություն

2005-2007 թթ. նախատեսվում է գազաբաշխման ցանցի ընդլայնում, գազահաշվիչների ձեռք բերում և տեղադրում, որի ժամանակացուցը բերվում է աղյուսակներ 13, 14-ում:

2005 թվականի ընթացքում գազաբաշխման համակարգում նախատեսվում է իրականացնել գազաֆիկացման 4837.7 մլն. դրամի աշխատանք, որից 1837.7 մլն. դրամը կառուցման և 3000 մլն. դրամը հաշվիչների գնման համար:

Աղյուսակ 13. Գազաբաշխման ցանցի շինարարություն

հ/հ	Սարգեր	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)					
		2005		2006		2007	
		կմ	գումար	կմ	գումար	կմ	գումար
1	Երևան քաղաք	167	476,2	255	1062,5	170	779,2
2	Շիրակի մարզ	111,5	322,3	21,2	88,6	17	77,9
3	Լոռու մարզ	34,9	105,4	34	141,7	17	77,9
4	Կոտայքի մարզ	12,8	49,3	8,5	35,4	8,5	39,0
5	Տավուշի մարզ	6,9	31,1	55,3	230,3	42,5	194,8
6	Արմավիրի մարզ	90	257,9	17	70,8	12,8	58,4
7	Արարատի մարզ	48,9	147,0	34	141,7	34	155,8
8	Սյունիքի մարզ	35,8	115,5	8,5	35,4	6,8	31,2
9	Գեղարքունիքի մարզ	50,6	155,3	8,5	35,4	6,8	31,2
10	Արագածոտնի մարզ	36,1	108,5	8,5	35,4	8,5	39,0
11	Վայոց Ձորի մարզ	24,6	69,2	4,3	17,9	4,3	19,5
Ընդամենը		619,0	1837.7	454,8	1895.1	328,2	1503.9

2.3.2. Նոր բաժանորդների գազահաշվիչների ձեռք բերում և տեղադրում

Աղյուսակ 14. Նոր բաժանորդների գազահաշվիչների ձեռք բերում և տեղադրում

h/h	Սարգեր	Անհրաժեշտ ներդրումներ (մլն. դրամ)								
		2005			2006			2007		
		պոտ.	փաստ.	գումար	պոտ.	փաստ.	գումար	պոտ.	փաստ.	գումար
1	Երևան քաղաք	30000	40000	1333,3	30000	34000	1133,3	20000	27000	900,0
2	Շիրակի մարզ	3500	3500	116,7	2500	2500	83,3	2000	2000	66,7
3	Լոռու մարզ	4000	7500	250,0	4000	5500	183,3	2000	3500	116,7
4	Կոտայքի մարզ	2500	10000	333,3	1000	5000	166,7	1000	3000	100,0
5	Տավուշի մարզ	6000	4500	150,0	6500	5500	183,3	5000	4000	133,3
6	Արմավիրի մարզ	3000	7000	233,3	2000	5500	183,3	1500	3000	100,0
7	Արարատի մարզ	2200	5500	183,3	4000	5000	166,7	4000	4000	133,3
8	Սյունիքի մարզ	2000	3000	100,0	1000	1800	60,0	800	1000	33,3
9	Գեղարքունիքի մ	1000	2500	83,3	1000	2000	66,7	800	1000	33,3
10	Արագածոտնի մ.	500	5000	166,7	1000	2300	76,7	1000	1000	33,3
11	Վայոց Ձորի մ.	500	1500	50,0	500	900	30,0	500	500	16,7

Ընդամենը	55200	90000	3000	53500	70000	2333.3	38600	50000	1666.7
----------	-------	-------	------	-------	-------	--------	-------	-------	--------

Գազամատակարարման վերականգնման սկզբից առ. 01.01.2005թ. ցանցին են միացվել շուրջ 270000 բաժանորդ, իսկ հնարավորություն է ստեղծվել միանալու 367000 բաժանորդի համար: 2005 թ. ավարտին հնարավորություն կստեղծվի ցանցին միանալու 422200 բաժանորդի համար, փաստացի միացվածների թիվը կկազմի մոտ 360000, 2006 թ. ավարտին - 475700 պոտենցյալ և 430000 փաստացի, 2007 թ. ավարտին – 514300 պոտենցյալ և 480000 փաստացի բաժանորդ:

Ակնկալվող արդյունքները

2005թ. նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում գազամատակարարման հնարավորություն կստեղծվի շուրջ 145000 պոտենցյալ սպառողների համար, իսկ փաստացի բաժանորդների թիվը տարեվերջին կավելա 90000-ով, որոնց միացումից հետո բնական գազի առաքումը կավելանա մոտ 90 մլն մ³-ով:

2.3.3. Գազաբաշխման համակարգում վերականգնում, փոխարինում, վերակառուցում

2005 թ. գազաբաշխման համակարգում նախատեսված է 8336 մ մ/ճ, 6200 մ ց/ճ վերգետնյա, 29211 մ մ/ճ և 28270 մ ց/ճ ստորգետնյա գազատարների վերականգնում և վերատեղադրում, որի համար անհրաժեշտ է 372.5 մլն դրամի ներդրումներ, այդ թվում՝ 25.0 մլն դրամ հետազոտման և նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար: Նշված աշխատանքների ամփոփ տեսքը ըստ ԳԳՄ-ների բերված է աղյուսակներ 15 -ում:

Աղյուսակ 15. Գազաբաշխման համակարգում վերականգնում և վերատեղադրում

Մասնաճյուղի Անվանումը		վերգետնյա վերականգնում		Ընդամենը	ստորգետնյա վերատեղադրում		Ընդամենը	Ընդամենը	Պահանջվող ներդրումներ		Պահանջվող ներդրումներ		Պահանջվող ներդրումներ
		միջին ծնշան	ցածր ծնշում		միջին ծնշում	ցածր ծնշում			վերականգնում մլն. դրամ		վերատեղադրում մլն. դրամ		
									միջին ծնշան	ցածր ծնշում	միջին ծնշան	ցածր ծնշում	
զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	զծ.մ	
1.	Երևանի ԳԳՄ	2640	420	3060,0	2183	867	3050	6110	4,5	0,7	38,7	15,4	59,3
2.	Լոռիի ԳԳՄ	1600,0	1630,0	3230,0	4317,0	3780,0	8097,0	11327	1,3	1,4	20,5	18,0	41,2
3.	Կոտայքի ԳԳՄ	0,0	0,0	0,0	1850,0	790,0	2640,0	2640	0,0	0,0	8,8	3,7	12,5
4.	Արարատի ԳԳՄ	1150,0	0,0	1150,0	3590,0	250,0	3840,0	4990	2,5	0,0	26,5	1,8	30,8
5.	Մարտունու ԳԳՄ	0,0	0,0	0,0	1430,0	8625,0	10055,0	10055	0,0	0,0	3,5	21,0	24,5
6.	Սյունիքի ԳԳՄ	260,0	370,0	630,0	65,0	400,0	465,0	1095	1,7	2,4	0,4	2,4	6,8
